

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ի 2017 թվականի N _____-Ն

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՂԻ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 64-րդ հոդվածները և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 97.210.00429) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 97.210.00427):

2. Սահմանել, որ՝

1) «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան,

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են՝ ՀՀ Տավուշի մարզի «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի հետ համատեղ սույն որոշումն

ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված՝ միացած պետական ոչ առևտրային կազմակերպության՝

1) հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև հաստատել գույքի կազմը, արժեքը, միացման պայմանագիրը և փոխանցման ակտը.

2) գործունեության դադարման պետական գրանցումը.

3) սովորողների ուսումնառության բնականոն գործընթացը:

4. Թույլատրել «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը մարման կարգով շարունակելու «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հիմնական ծրագրով սովորող 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում սովորողների ուսումնառությունը:

5. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, տալ առաջարկություն՝ «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ամրացված Բերդ քաղաքի Հայկ Նահապետի 22 հասցեում գտնվող անշարժ գույքի հետագա օգտագործման վերաբերյալ:

6. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ վերակազմակերպումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՂԻ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ուսումնական հաստատություններում աշակերտների թվի նվազման և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքում գործող «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որտեղ ուսումնառում է 150 աշակերտ, սակայն դպրոցը նախատեսված է 250 աշակերտի համար: Ավագ դպրոցից մոտ 300 մետր հեռավորության վրա, հարմարեցված /ոչ տիպային/ շենքում, գործում է «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որտեղ ուսումնառում է շուրջ 70 աշակերտ, ունի 27 աշխատող՝ 18 ուսուցիչ, 2 վարչական աշխատող, ուսումնասօժանդակ և տնտեսական անձնակազմ՝ թվով 8 :

«ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելով և միացնելով «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածը սահմանում է. «Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ

ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում:»:

Միացման ձևով վերակազմակերպման արդյունքում ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատության աշխատողները կհամարվեն Բերդի ավագ դպրոցի աշխատողներ:

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես վարչական և ուսումնաօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ / աշակերտների թվի փոփոխություն/:

Ակնկալվող արդյունքը

Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>Առաջարկում է</p> <p>1. ««ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի 3-րդ կետում «1-ին կետերում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին կետում» բառերով:</p> <p>2. Ընդլայնվող «Բերդի ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումն անհրաժեշտ է համապատասխանեցնել պետական գրանցում ստացած կանոնադրության մեջ նշված անվանմանը:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունված է</p>	<p>1. Որոշման նախագծում առաջարկին համապատասխան 3-րդ կետում «1-ին կետերում» բառերն փոխարինվել է «1-ին կետում» բառերով:</p> <p>2. Որոշման նախագծում ընդլայնվող կազմակերպության անվանումը համապատասխանեցված է պետական գրանցում ստացած կանոնադրության մեջ նշված անվանմանը:</p>
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-07-04 թիվ 01/9-2/12076-17	Կատարել է դիտողություն որոշման նախագծում 4-րդ և 5-րդ կետերը կրկնվելու մասին:	Ընդունվել է	Որոշման նախագծում 5-րդ կետը հանվել է:
3.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 2017-07-06 01/15.1/4213-17	<p>1. Որոշման Նախագիծը, մասնավորապես՝ 1-ին կետը հակասում է ««Հանրակրթության մասին»» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դրույթներին:</p> <p>Վարժարանները իրենց մեջ ներառում են նաև 5-9-րդ դասարանները և գործում են ՀՀ</p>	1.2ի ընդունվում	1.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են ուսումնական հաստատությունների տեսակները: Ուսումնական հանտատությունը, ըստ իրականացվող կրթական ծրագրերի կարող է լինել

		<p>մարզպետարանների ենթակայությամբ:</p> <p>Այս առումով՝ առաջարկում ենք քննարկել վարժարանի ու ավագ դպրոցի միաձուլման ձևով վերակազմակերպման ճանապարհով մարզային ենթակայությամբ միջնակարգ դպրոց ստեղծելու հարցը:</p> <p>2. Առաջարկում ենք վերանայել Նախագծի 5-րդ կետը, որը 4-րդ կետի կրկնությունն է:</p> <p>3. Որոշման Նախագծի տեղեկանք-հիմնավորման մեջ բացակայում է միացման ձևով վերակազմակերպման արդյունքում հաստիքների հնարավոր կրճատման, ինչպես նաև կրճատվող հաստիքներ զբաղեցնող անձանց այլ աշխատանքի տեղավորման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:</p> <p>4. Նախագծում, ինչպես նաև Նախագծի հիմնավորման մեջ բացակայում</p>	<p>2.Ընդունվել է .</p> <p>4.Ընդունվել է</p>	<p>վարժարան՝ 5 -12 -րդ դասարաններ և հաստատության ենթակայության սահմանափակում օրենքով նախատեսված չէ:</p> <p>«Վ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի նիստի 12 արձանագրային որոշմամբ հաստատվել է ավագ դպրոցների զարգացման ռազմավարական ծրագիրը և 2009-2010 ուսումնական տարվանից ներդրվել է եռամյա ավագ դպրոցի ծրագիրը: Երևան քաղաքում և «Վ մարզերում ավագ դպրոցների ընտրությունը կատարվել է մանրամասն քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքում: Ռազմավարական ծրագրի համաձայն՝ փոքր քաղաքային համայնքներում նախատեսվել է առնվազն 1 ավագ դպրոց՝ հոսքային ուսուցում իրականացնելու նպատակով: Ավագ դպրոցի առաքելությունն իրականացնելու համար նրատակահարմար չէ տվյալ տարածքում միջնակարգ դպրոցի գոյությունը:</p> <p>2. Որոշման նախագծում 5-րդ կետը հանվել է:</p> <p>3.Որոշման նախագծի հիմնավորման մեջ կատարվել է լրացում նախատեսվող հաստիքների կրճատման մասին:</p> <p>4.Նախագծում լրացվել է նոր 5-րդ կետ «ՎՎ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական</p>
--	--	--	---	--

		են «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի զբաղեցրած անշարժ գույքի հետագա օգտագործման, կամ տիրապետման վերաբերյալ դրույթը:		ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի զբաղեցրած անշարժ գույքի հետագա օգտագործման քննարկման վերաբերյալ:
4.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2017-07-03 թիվ 01/13.23/4091-17	Առաջարկում է 1. համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդված 11-րդ մասի՝ արգելվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումների կրճատումները, ուստի առաջարկում եմ նախագծում «ՀՀ» հապավումը գրել ամբողջությամբ, 2. նախագծի 4-րդ և 5-րդ կետերը կրկնվում են, 3. նախագծում ավելացնել դրույթ, համաձայն որի պետք է սահմանել վերկազմակերպման արդյունքում ազատված անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու մասին:	1.Ընդունվել է 2.Ընդունվել է 3. Ընդունվել է	1.Որոշման նախագծում «ՀՀ» հապավումը գրվել է ամբողջությամբ: 2. Որոշման նախագծից հանվել է 5-րդ կետը: 3. Նախագծում լրացվել է նոր 5-րդ կետ «ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի զբաղեցրած անշարժ գույքի հետագա օգտագործման քննարկման վերաբերյալ:
5.	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 2017-07-03 ՄՍ/4070-17	Առաջարկություն ու դիտողություն չունի		